## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

9 հոկտեմբերի 2019թ. թիվ 515

### ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. հունիսի 13-ի թիվ 751-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու կարգի» 17-րդ և 18-րդ կետերը՝

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ եմ.

Խնամատարություն կազմակերպելու նպատակով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց տվյալների համադրում իրականացնելու համար ստեղծել բազմամասնագիտական խումբ՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 9
ք. Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. հոկտեմբերի 9-ի
թիվ 515 կարգադրության

**Կ Ա Զ Մ**

**Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց տվյալների համադրում իրականացնող բազմամասնագիտական խմբի**

Սվետլանա Asryan - խմբի ղեկավար, մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

Խմբի անդամներ.

Նաիրա Համբարձումյան - մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ

Գայանե Բոջուկյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ

Արմեն Ավետյան - Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

Մարգարիտա Շահվերդյան - «Առավոտ» ԲՀԿ-ի նախագահ /համաձայնությամբ/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՀՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ